Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի

Վանաձորի գրասենյակ

Տեղեկանք

Հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումների մշտադիտարկման արդյունքները 2017 թվականին

Վանաձոր

2018թ.

Հեղինակային խումբ

Խմբագրեց՝ Արթուր Սաքունց

Կազմեց՝ Մարիետա Թեմուրյան

Սույն ուսումնասիրությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կայունությունը Հայաստանում ժողովրդավարության և մարդու իրավունքների մարտահրավերների լույսի ներքո» ծրագրի շրջանակներում, դրամաշնորհ՝ N 19471:

Սույն ուսումնասիրության մեջ տեղ գտած տեսակետների հեղինակը ՀՔԱ Վանաձորի գրասենյակն է, որն էլ միայն պատասխանատու է նյութի բովանդակության համար: Ուսումնասիրության բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի տեսակետներին, այն արտահայտում է հեղինակների կարծիքը և հաստատված չէ Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի կամ նրա խորհրդի կողմից, հետևաբար չի ներկայացնում Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները:

Բովանդակություն

Հապավումների ցանկ 4

Նախաբան 5

Հրապարակումների աղբյուրները 7

Հրապարակումների բնույթը, հանրային վերաբերմունքի ձևավորման վրա նրանց ազդեցությունը 13

Հրապարակումների բնույթը 13

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց և նրանց խնդիրների նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա հրապարակումների ունեցած ազդեցությունը ... 15

Հրապարակված նյութերում մարդու իրավունքների խախտման դեպքերի արտացոլումը 17

Ամփոփում 19

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի վերաբերյալ 21

Հապավումների ցանկ

ԱԺ – Ազգային ժողով

ԱԻՆ – Արտակարգ իրավիճակների նախարարություն

ԱՀԿ – Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ԱՆ Քրեակատարողական ծառայություն – Արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայություն

ԶԼՄ – Զանգվածային լրատվության միջոց

ՀԱԽՈՒ անձ – հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակ – Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

ՄԻՊ գրասենյակ – Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ

Նախաբան

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը շուրջ յոթ տարի մշտադիտարկում է Հայաստանի Հանրապետության զանգվածային լրատվության միջոցները՝ նշված հարթակի միջոցով բացահայտելու համար հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վիճակը:

Մշտադիտարկումը մասնավորապես ներառում է զանգվածային լրատվության միջոցներով տարածվող հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումների հավաքագրումն ու հետագա վերլուծությունը համապատասխան մեթոդաբանությամբ[1]:

2017թ. մշտադիտարկման արդյունքում հավաքագրվել և վերլուծության է ենթարկվել ընդհանուր թվով 500 հրապարակում:

Մշտադիտարկվել է 16 ինտերնետային էջ (news.am, a1plus.am, lragir.am, 168.am, 7or.am, epress.am, ilur.am, galatv.am, armlur.am, politik.am, operativ.am, hhpress.am, police.am, prosecutor.am, moh.am, mlsa.am): Դրանցից 4-ը պետական մարմինների՝ ՀՀ ոստիկանության, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ առողջապահության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների պաշտոնական ինտերնետային էջեր են:

Հրապարակումները դասակարգվել են ըստ տեղեկատվության տարածման աղբյուրների՝

- *պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերով հրապարակված նյութեր,*
- *զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված նյութեր:*

Պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերով և զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված նյութերը ևս խմբավորվել են ըստ պետական մարմինների, կազմակերպությունների և մարդկանց խմբերի:

Առանձնացվել են հրապարակումների հետևյալ երեք տեսակները՝

- քրեադատավարական գործողությունների իրականացման վերաբերյալ (*քրեական հետապնդման, բերման ենթարկելու, ձերբակալման, նախաքննության, դատաքննության, պատժի նշանակման, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի ու պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ նյութեր),*
- տեղեկատվական *(ինչպես օրինակ՝ վիճակագրական տվյալներ ներկայացնող, տարբեր հետազոտությունների, հոգեկան առողջության պահպանման, կանխարգելման, հոգեկան առողջության խնդիրների առաջացման պատճառների, հոգեկան առողջության բնագավառում իրականացվող միջոցառումների, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող*

[1] Սույն տեղեկանքում համեմատականներ են անց կացվում նախորդ երեք տարիների հետ: Սույն ընթացքում դիտարկվել է նույն քանակի՝ ինտերնետային 16 էջ, այն տարբերությամբ, որ 2015-2016թթ. դիտարկված 1in.am-ի և slaq.am-ի փոխարեն 2017թ. դիտարկվել է epress.am-ը և politik.am-ը:

անձանց կողմից իրականացվող ինքնասպանությունների և ինքնասպանությունների փորձերի վերաբերյալ նյութեր),

- դիրքորոշում արտահայտող *(որպես դիրքորոշում արտահայտող հրապարակումներ են դիտարկվել կոչերը, բաց նամակները, հայտարարությունները, հարցազրույցները):*

Ըստ հանրային կարծիքի ձևավորման վրա ունեցած ազդեցության՝ հրապարակումները բաժանվել են երեք խմբի՝

- ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ բացասական վերաբերմունք ձևավորող,
- ՀԱԽՈՒ անձանց նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորող և
- չեզոք բնույթի (դրական կամ բացասական վերաբերմունք չեն ձևավորում):

Առանձին դիտարկվել են նաև այն հրապարակումները, որոնք պարունակում են ՀԱԽՈՒ անձանց իրավունքների խախտման նկարագրություններ կամ անդրադառնում են ՀԱԽՈՒ անձանց իրավունքների հնարավոր խախտումներին:

Հրապարակումների աղբյուրները

2017թ. մշտադիտարկված ինտերնետային 16 էջերից հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հավաքագրվել է 500 հրապարակում: Դրանցից 27-ը տարածվել են պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերով, մյուս 473 հրապարակումները՝ զանգվածային լրատվության միջոցներով (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հրապարակումների դասակարգումը՝ ըստ տեղեկատվության տարածման աղբյուրների

N	Հրապարակումների աղբյուրը	2014թ.		2015թ.		2016թ.		2017թ.[2]		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	**Թիվը**	**Տոկոսը**
1	Պետական մարմնի պաշտոնական ինտերնետային էջ, որից	28	6.3	20	3.6	27	4.4	27	5.4	**102**	**4.8**
	ՀՀ առողջապահության նախարարություն	17	3.8	7	1.25	10	1.6	15	3	**49**	**2.3**
	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2	0.5	5	0.9	6	1	8	1.6	**21**	**1**
	ՀՀ ոստիկանություն	8	1.8	7	1.25	11	1.8	2	0.4	**28**	**1.3**
	ՀՀ դատախազություն	1	0.2	1	0.2	0	0	2	0.4	**4**	**0.2**
2	Զանգվածային լրատվության միջոց	415	93.7	541	96.4	593	95.6	473	94.6	**2022**	**95.2**
Ընդամենը		**443**	**100**	**561**	**100**	**620**	**100**	**500**	**100**	**2124**	**2055**

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ից, պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերով հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումների թիվը 2014-2017թթ. ընթացքում էական փոփոխություններ չի կրել: Պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերով համեմատաբար քիչ հրապարակումներ են տարածվել 2015թ.: Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ 2015-2017թթ. այս հրապարակումների թվի աճ է գրանցվել յուրաքանչյուր տարվա ընթացքում հավաքագրված հրապարակումների նկատմամբ (2015թ. համեմատությամբ՝ 1.8 տոկոսով, 2016թ. համեմատությամբ՝ 1 տոկոսով):

[2] Հարկ է նշել, որ հավաքագրվել են նաև այն հրապարակումները, որոնք ոչ թե ամբողջությամբ են վերաբերում, այլ անդրադառնում են հոգեկան առողջության բնագավառին: Պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերից հավաքագրված 27 հրապարակումներից 10-ը անդրադառնում են հոգեկան առողջության բնագավառին (դրանցից 4-ը հրապարակվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ինտերնետային էջով, 6-ը՝ ՀՀ առողջապահության նախարարության):

2017թ. պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերից հավաքագրված 27 հրապարակումների մեծ մասը՝ 15-ը, ՀՀ առողջապահության նախարարության կողմից է տարածվել: Մյուս 12 հրապարակումներից 8-ը տարածվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ինտերնետային էջով և 2-ական հրապարակում՝ ՀՀ ոստիկանության ու ՀՀ գլխավոր դատախազության ինտերնետային էջերով: Ուշագրավ է, որ նախորդ տարիների համեմատությամբ նվազել է ՀՀ ոստիկանության պաշտոնական ինտերնետային էջով հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումների թիվը, իսկ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դեպքում հակառակը՝ աճել է:

ՀՀ առողջապահության նախարարության ինտերնետային էջով 2017թ. տարածված 15 հրապարակումները վերաբերել են հոգեկան առողջության պահպանմանը, նախարարության կողմից իրականացվող աշխատանքներին, այդ թվում՝ պաշտոնական հանդիպումներին, համագործակցություններին, ոլորտի վերաբերյալ դասընթացների իրականացմանը, ՀՀ գլխավոր հոգեբույժին հուշամեդալով պարգևատրմանն ու հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և բուժման ծառայություններ մատուցող հաստատություններում մշտադիտարկման հասարակական խմբի ձևավորմանը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ինտերնետային էջով հրապարակված 8 նյութերը վերաբերել են նախարարության պաշտոնական հանդիպումներին, օրենսդրական փոփոխությունների, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի հաստատությունների հետ կապված տարվող աշխատանքներին:

ՀՀ ոստիկանության և ՀՀ գլխավոր դատախազության ինտերնետային էջերով հրապարակված նյութերից մեկը վերաբերել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի մահվան հետ կապված քրեական գործի հարուցմանը, մյուս երեք նյութերը՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից կատարված հանցագործություններին:

Զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված 473 նյութերից 158-ը ևս տարածվել է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա, 331-ում տեղեկատվությունը ստացվել է այլ աղբյուրներից (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ԶԼՄ-ներով տարածված հրապարակումների դասակարգումը՝ ըստ ՀՀ պետական մարմիններից և այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության

N		2014թ.		2015թ.		2016թ.		2017թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
Պետական մարմիններ (աղբյուրներ)											
1	Ոստիկանություն	27	11.7	25	24	53	30.1	19	12	124	18.6
2	Քննչական կոմիտե	4	1.7	25	24	49	27.8	42	26.6	120	18
3	Առողջապահության նախարարություն	91	39.6	10	9.6	21	11.9	34	21.5	156	23.4
4	Տեղական ինքնակառավարման մարմին	18	7.8	11	10.6	10	5.7	2	1.3	41	6.1
5	Հատուկ քննչական ծառայություն	11	4.8	14	13.4	1	0.6	0	0	26	3.9
6	Նյարդահոգեբուժական հաստատություն	6	2.6	10	9.6	4	2.3	9	5.7	29	4.3
7	ԱԺ հարթակ/պատգամավորներ	0	0	0	0	8	4.5	7	4.4	15	2.2
8	ԱՆ քրեակատարողական ծառայություն	0	0	0	0	5	2.8	0	0	5	0.8
9	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	0	0	2	2	1	0.6	2	1.3	5	0.8
10	Դատական տեղեկատվական համակարգ	2	0.9	1	1	0	0	5	3.2	8	1.2
11	Պաշտպանության նախարարություն	20	8.7	0	0	1	0.6	3	1.9	24	3.6
12	Առողջապահական կազմակերպություն	31	13.5	0	0	1	0.6	1	0.6	33	4.9
13	Դատախազություն	6	2.6	0	0	1	0.6	2	1.3	9	1.4
14	ԱԻՆ փրկարարական ծառայություն	2	0.9	0	0	10	5.7	15	9.5	27	4
15	Կառավարություն	0	0	0	0	0	0	17	10.7	17	2.5
16	Այլ	12	4.8	6	5.8	11	6.2	0	0	29	4.3
	Ընդամենը	**230**	**100**	**104**	**100**	**176**	**100**	**158**	**100**	**668**	**100**
Ոչ պետական կազմակերպություններ և/կամ ոչ պաշտոնատար անձինք											
1	Փաստաբան և/կամ իրավաբան	8	4	22	5	20	4.7	17	5.1	67	4.8
2	Հոգեբույժ և/կամ հոգեբան	12	6	18	4.1	14	3.3	14	4.2	58	4.2
3	Հասարակական, այդ թվում՝ հոգեկան առողջության ոլորտում գործող կազմակերպություններ	19	9.4	18	4.1	26	6.2	19	5.7	82	5.9
4	ՀԱԽՈՒ անձի հարազատ և/կամ քաղաքացի	44	21.9	11	2.5	31	7.3	31	9.4	117	8.4
5	ՄԻՊ գրասենյակ	20	9.9	4	0.9	9	2.1	22	6.7	55	3.9
6	ՀԱԽՈՒ անձ	7	3.5	0	0	10	2.4	3	0.9	20	1.4
7	Միջազգային կազմակերպություն	0	0	1	0.2	3	0.7	7	2.1	11	0.8
8	Հասարակական դիտորդական խմբեր	1	0.5	0	0	1	0.2	0	0	2	0.1
9	ԶԼՄ և/կամ նշված չի[3]	57	28.4	350	79.4	296	70	214	64.7	917	65.7
10	Այլ	33	16.4	17	3.8	13	3.1	4	1.2	67	4.8
	Ընդամենը	**201**	**100**	**441**	**100**	**423**	**100**	**331**	**100**	**1396**	**100**
Ընդամենը		**431***		**545***		**599***		**489***		**2064**	

[3] Այն հրապարակումները, որոնք տեղեկատվություն են տրամադրել Հայաստանի Հանրապետությունից դուրս իրականացված գործողությունների մասին, ներառվել են ԶԼՄ և/կամ նշված չի խմբում (2017 թ. ընթացքում 214 հրապարակումներից մասնավորապես 136-ը)։

* Այս թվերը մեծ են տարվա ընթացքում ԶԼՄ-ներից հավաքագրված հրապարակումների ընդհանուր թվից, քանի որ որոշ նյութերում տեղեկատվության տրամադրող է հանդիսացել թե՛ պետական մարմինը, թե՛ ոչ պաշտոնատար անձը և/կամ մասնավոր կազմակերպությունը:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, նախորդ երկու տարվա համեմատությամբ աճել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումների թիվը (մոտ տասը տոկոսով)[4]: Սակայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումները տարեկան առավելագույնը երկուսն են: Միևնույն ժամանակ նվազել է ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումների թիվը (2017թ. ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումների թիվը 2016թ. համեմատությամբ նվազել է մոտ 18 տոկոսով):

2017թ. էականորեն աճել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումների թիվը նախորդ երկու տարվա համեմատությամբ: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումները անդրադառնում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և բուժման հաստատություններում մարդու իրավունքների մշտադիտարկումներին, մշտադիտարկման գործիքների կատարելագործմանը, բացահայտված խնդիրների լուծման ուղղությամբ աշխատանքներին, ինչպես նաև անհատ քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը:

Հասարակական կազմակերպությունների, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց և նրանց հարազատների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումները ևս որպես կանոն վերաբերվում են հոգեկան առողջության բնագավառում մարդու իրավունքների պաշտպանության վիճակին:

Հոգեբանների և հոգեբույժների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումները հիմնականում վերաբերում են Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության բնագավառում տրամադրվող ծառայություններին, այդ թվում՝ առկա բացերին, հոգեկան առողջության պահպանմանը, ինչպես նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ առկա կարծրատիպերին: Մասնագետները կարևորում են Հայաստանում վերականգնողական և համայնքահեն ծառայությունների ներդրումը: Շեշտվում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, հատկապես պատշաճ ծառայությունների ստացման պարագայում, վտանգ չեն ներկայացնում: Հրապարակումներից մեկում հոգեբույժը տեղեկատվություն է տրամադրում շիզոֆրենիա ունեցող անձանց՝ «առանց հոսպիտալացման կամ ցերեկային ստացիոնարում» բուժման մեթոդի մասին, որը չնայած թանկ արժե, այնուհանդերձ շահեկան է հոսպիտալացման և հիվանդանոցային բուժման համար հատկացվող ֆինանսական միջոցների համեմատությամբ:

[4] Հարկ է նշել, որ 2014թ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից հրապարակումների մեծ թիվը պայմանավորված է կոնկրետ անձի վերաբերյալ բազմաթիվ հրապարակումներով:

Հոգեկան առողջության պահպանմանը, հոգեկան առողջության բնագավառում մարդու իրավունքների պաշտպանությանն են անդրադառնում նաև միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումները։

2017թ. զանգվածային լրատվության միջոցները լուսաբանել են հոգեկան առողջության բնագավառում օպտիմալացման գործընթացը (25 հրապարակում)։ Խոսքը վերաբերում է մասնավորապես ՀՀ առողջապահության նախարարության կառուցվածքային բարեփոխումների հանձնաժողովի կողմից Երևան քաղաքում իրականացված ուսումնասիրությանն ու գործող երեք հոգեբուժական հաստատություններից երկուսի՝ «Նորք» հոգեբուժական կենտրոնի ու «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոնի միավորմանը։ Այս հարցի հետ կապված տեղեկատվությունը լուսաբանվել է հատկապես ՀՀ առողջապահության նախարարության ու հոգեբուժական հաստատությունների ներկայացուցիչների կողմից, ինչպես նաև Կառավարության նիստերից ստացված տեղեկատվության հիման վրա։ Որոշ տեղեկատվություն է տարածվել նաև լրագրողների, քաղաքացիների ու ՀՀ առողջապահության նախկին նախարարի կողմից։ Այս գործընթացի մասին բացասաբար են արտահայտվել ինչպես հոգեբուժական հաստատությունների ներկայացուցիչները, ՀՀ առողջապահության նախկին նախարար Արարատ Մկրտչյանը, այնպես էլ ՀՀ առողջապահության նախարարության՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում պաշտոնատար անձինք։ Նրանք ընդգծել են նման քաղաքականության վարման բացասական հետևանքները հատկապես հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման տեսանկյունից։ ՀՀ առողջապահության նախարարության Բժշկական օգնության քաղաքականության վարչության պետ Դավիթ Մելիք-Նուբարյանը նշել է. «Մենք ցանկանում ենք հասկանալ, թե որ տարբերակն է ամենալավը, քանի որ բուժհաստատության փակումը մի կողմից համահունչ չէ ԱՀԿ-ի մոտեցումներին։ Մյուս կողմից՝ մենք պետք է հասկանանք, թե հոգեբուժական հիվանդանոցներում մահճակալների օբյեկտիվ պահանջն ինչպիսին է։ Մենք փորձում ենք ճիշտ բալանս գտնել»։ ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր հոգեբույժ Սամվել Թորոսյանն ասել է ավելին. «Սա հարկադրված քայլ է, որ կատարվում է ոչ լավ կյանքի պատճառով, սակայն սա հետքայլ է»։ Եվ չնայած մասնագետների կողմից նման մոտեցումներին, 2017թ. վերը նշված երկու հոգեբուժական հաստատությունները միավորվել են։

2017թ. հավաքագրված հրապարակումներից 45-ը անդրադառնում են Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության բնագավառում առկա խնդիրներին։ Այս հրապարակումներում առանձնացվում է՝

- ՀՀ-ում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019թթ. ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների չիրականացումը, նաև սրանով պայմանավորված հոգեբուժական ծառայության՝ առաջնային օղակում և բազմապրոֆիլ հիվանդանոցներում բացակայությունը, վերականգնողական, համայնքահեն ծառայությունների բացակայությունը,
- ՀՀ առողջապահության նախարարության որդեգրած սխալ քաղաքականությունը հոգեբուժական հաստատությունների միավորման հետ կապված, որը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ոտնահարման պատճառ է դառնում,

- հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժման և խնամքի ծառայություններ մատուցող հաստատություններում մարդու իրավունքների չապահովումը,
- այս ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցների սղությունը,
- կիրառվող հոգեմետ դեղերի որակյալ չլինելը,
- հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բացասական կարծրատիպերի առկայությունը, որը նաև համապատասխան օգնության դիմելուց խուսափելու պատճառ է դառնում,
- զորակոչիկների փորձաքննությունների ոչ պատշաճ իրականացման արդյունքում ամենօրյա բուժօգնության ու խնամքի կարիք ունեցող անձանց զորակոչումը։

Վերը նշված հրապարակումներում տեղեկատվությունը տրամադրվել է ինչպես պաշտոնական աղբյուրների (ՀՀ առողջապահության նախարարության, հոգեբուժական հաստատությունների ներկայացուցիչներ), այնպես էլ ոչ պաշտոնական աղբյուրների կողմից (հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձ, հասարակական կազմակերպություններ, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, զանգվածային լրատվության միջոց)։

Այսպիսով, կարող ենք արձանագրել հոգեկան առողջության բնագավառի առավել պատասխանատու գերատեսչությունների՝ ՀՀ առողջապահության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ինտերնետային էջերով և վերջիններիս կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումների թվի աճը։ Նշանակալի է այս մարմինների կողմից հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ ուշադրությունը, այդ թվում՝ այս բնագավառում խնդիրներին մասին տեղեկատվության տրամադրումը։ Այնուամենայնիվ, մտահոգիչ է օպտիմալացման գործընթացի իրականացումը, որը մասնագետները գնահատում են որպես հետընթաց։

Կարևոր է նաև ՀՀ ոստիկանության ինտերնետային էջով կամ վերջինիս կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումների թվի նվազումը, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների, հոգեկան առողջության բնագավառի մասնագետների՝ հոգեբույժների, հոգեբանների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումների առկայությունը, որոնք առավելապես բարձրաձայնում են տվյալ բնագավառում առկա խնդիրները։

Հրապարակումների բնույթը, հանրային վերաբերմունքի ձևավորման վրա նրանց ազդեցությունը

Հրապարակումների բնույթը

2017թ. հավաքագրված 500 հրապարակումներից 324-ը տեղեկատվական բնույթի են, 165-ը՝ նկարագրում են քրեադատավարական գործողությունները, 11-ը՝ հանդիսանում են դիրքորոշում արտահայտող նյութեր (տե՛ս աղյուսակ 3)։

Աղյուսակ 3

2014-2017թթ. հավաքագրված հրապարակումների դասակարգումը՝ ըստ տեսակների

N	Տեսակը	2014թ.		2015թ.		2016թ.		2017թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Դիրքորոշում արտահայտող	28	6	4	0.7	31	5	11	2.2	74	3.5
2	Քրեադատավարական գործողությունների իրականացման վերաբերյալ	107	24	148	26.4	184	29.7	165	33	604	28.4
3	Տեղեկատվական	308	70	409	72.9	405	65.3	324	64.8	1446	68.1
Ընդամենը		**443**	100	**561**	100	**620**	100	**500**	100	**2124**	**100**

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 3-ից, 2017թ. հավաքագրված 500 հրապարակումներից մեծամասնությունը՝ մոտ 65 տոկոսը, տեղեկատվական բնույթի են։ Առհասարակ 2014-2017թթ. տեղեկատվական բնույթի հրապարակումները գերակշռել են։ Այնուհանդերձ մշտապես մեծ թիվ են կազմել նաև քրեադատավարական գործողությունների վերաբերյալ հրապարակումները։ Ընդ որում 2017թ. կազմել են առավել բարձր՝ 33 տոկոսը։

Չնայած վերևում նշվել է, որ հոգեկան առողջության բնագավառի մասնագետները վերջին տարվա ընթացքում անդրադարձել են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հասարակության համար վտանգ չներկայացնելուն, քրեադատավարական գործողությունների վերաբերյալ հրապարակումների նման մեծ թիվը, որոնցից 108-ը[5] հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից կատարված հանցագործություններին են վերաբերում, այդ թվում՝ սպանությունների, ավելի մեծ ազդեցություն կարող է ունենալ հասարակության կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքի ձևավորման

[5] Նշված 108 հրապարակումներից 105-ը համապատասխանաբար դասակարգվել են որպես հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող, մյուս երեքը՝ չնայած վերաբերում են ՀԱԽՈ անձի կողմից սպանությանը, այնուամենայնիվ դասակարգվել են որպես ՀԱԽՈ անձանց նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնագետը շեշտում է նման դեպքերի խիստ հազվադեպ պատահման ու սպանության՝ ամենայն հավանականությամբ այլ գործոններով պայմանավորված լինելու մասին։

առումով, քան մասնագետների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա փոքրաթիվ հրապարակումները։

Քրեադատավարական գործողությունների վերաբերյալ 4 հրապարակումներում էլ հանցագործությունը պայմանավորում են անձի՝ հոգեկան առողջության խնդիր ունենալու փաստով։

Հարկ է նշել, որ քրեադատավարական գործողությունների վերաբերյալ ևս 4 հրապարակում անդրադառնում է հանցագործության մեջ մեղադրվող անձանց հոգեկան առողջության խնդիր չունենալուն։ Սա գուցե և կարող է որոշակի մեղմել 108 հրապարակումների ազդեցությունը, բայց և հակակշիռ լինել չի կարող։

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ 108 հրապարակումներից 41-ում տեղեկատվությունը տարածվել է պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերով կամ ստացվել է պաշտոնական աղբյուրներից (ՀՀ քննչական կոմիտե՝ 17 հրապարակում, ՀՀ ոստիկանություն՝ 17, ՀՀ դատախազություն՝ 2, տեղական ինքնակառավարման մարմին՝ 1, դատական տեղեկատվական համակարգ՝ 4)։

2017թ. տարածված դիրքորոշում արտահայտող 11 հրապարակումներից 7-ը վերաբերել են քաղաքական գործչի նկատմամբ քրեական գործը և դատավարությունը միայն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի վկայության հիման վրա վարելուն՝ քաղաքական նպատակներով վերջինիս մեկուսացնելու նպատակով։ Մյուս 4 հրապարակումները վերաբերում են հոգեկան առողջության բնագավառում առկա խնդիրներին, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պատշաճ որակի դեղերով չապահովմանը։

Տեղեկատվական բնույթի հրապարակումներում առավել մեծ թիվ են կազմում տարբեր գիտական հետազոտությունների արդյունքների վերաբերյալ հրապարակումները (թվով 61)։ Մեծ թիվ են կազմել նաև հոգեկան առողջության պահպանմանը, բարելավմանը (թվով 30), օրենսդրական փոփոխություններին (թվով 11), օպտիմալացման գործընթացին (թվով 25), ինչպես նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից ինքնասպանություններին, ինքնասպանությունների փորձերին, փորձաքննությունների նշանակմանը, բնագավառում տեղի ունեցող այլ գործընթացներին վերաբերող հրապարակումները։

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ զանգվածային լրատվության միջոցներով առավել շատ տարածվում են հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ տեղեկատվական բնույթի հրապարակումները։ Սակայն մշտապես բարձր է նաև քրեադատավարական բնույթի հրապարակումների՝ հատկապես հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ հրապարակումների ցուցանիշը։ Մինչդեռ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ նման լայն լուսաբանումները բացասաբար են անդրադառնում այդ անձանց իրավունքների պաշտպանության վրա։

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց և նրանց խնդիրների նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա հրապարակումների ունեցած ազդեցությունը

2017թ. հավաքագրված 500 հրապարակումներից 356-ը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ դրական կամ բացասական վերաբերմունք չեն ձևավորում, մինչդեռ 137-ը նպաստում են բացասական և միայն 7-ը՝ դրական վերաբերմունքի ձևավորմանը (տե՛ս աղյուսակ 4)։

Աղյուսակ 4

Հրապարակումների դասակարգումը՝
ըստ հոգեկան առողջության բնագավառը ներկայացնելու բնույթի

N	Բնույթը	2014թ.		2015թ.		2016թ.		2017թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Բացասական վերաբերմունք ձևավորող հրապարակումներ	85	19.3	107	19.1	143	23.1	137	27.4	472	22.2
2	Դրական վերաբերմունք ձևավորող հրապարակումներ	2	0.4	2	0.3	4	0.6	7	1.4	15	0.7
3	Չեզոք բնույթի հրապարակումներ	356	80.3	452	80.6	473	76.3	356	71.2	1637	77.1
Ընդամենը		**443**	100	**561**	100	**620**	100	**500**	100	**2124**	**100**

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 4-ից, 2017թ. հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումների աճ է գրանցվել, իսկ բացասական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումները փոքր-ինչ նվազել են։ Հարկ է ուշադրություն դարձնել, որ չնայած դրական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումների թիվը աճել է 2014-2017թթ., այնուամենայնիվ դրանք մշտապես հատային են։ Իսկ բացասական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումների թիվը չնայած նվազել է 2016թ. համեմատությամբ, այնուհանդերձ 2014 և 2015 թվականների համեմատությամբ աճել է և մշտապես տարածվել մեծ քանակությամբ։

Դրական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող 7 հրապարակումները անդրադառնում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բացասական կարծրատիպերին, ըստ որի վերջիններս վտանգավոր են հասարակության համար։ Այս հրապարակումներում նշվում է, որ համապատասխան բուժման և վերականգնողական ծառայությունների տրամադրման դեպքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք վտանգ չեն ներկայացնում, որ հոգեկան առողջության խնդիրների մասին պետք է խոսել ու բարձրաձայնել այնպես, ինչպես սոմատիկ հիվանդությունների դեպքում։

Բացասական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող 137 հրապարակումներից 105-ը, վերաբերում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից կատարված հանցագործություններին: Մյուս հրապարակումները վերաբերում են անձի կողմից ինքնավնասումներին (5 հրապարակում), հանցագործության մեջ մեղադրվող անձի՝ հոգեկան առողջության խնդիրներ ունենալու վարկածին (4 հրապարակում), հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի՝ որպես հիմնական վկա ներգրավվմանը, շեշտադրելով վերջինիս վկայությունների հավաստիության կասկածը (12 հրապարակում), շրջապատի համար հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց վտանգավոր լինելուն (11 հրապարակում):

Առանձին ուշադրության են արժանի շրջապատի համար հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց վտանգավոր լինելու վերաբերյալ հրապարակումները, հատկապես դրանցից որոշները՝ պատրաստված «Ժողովուրդ» օրաթերթի կողմից[6]: Այս հրապարակումները բացահայտ կերպով խորացնում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց վտանգավոր լինելու կարծրատիպը և նրանց մեկուսացնելու, «ազատազրկելու» կոչ են հանդիսանում: Ավելին, հրապարակումներում տրամադրվում են ոչ ճշգրիտ տվյալներ Հայաստանի Հանրապետությունում անձին հարկադիր բուժման ենթարկելու գործող օրենսդրության ու պրակտիկայի վերաբերյալ՝ դրանով էլ ավելի ուժեղացնելով, հիմնավորելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մեկուսացմանն ուղղված պնդումը: Հրապարակումներում ներկայացվում է նաև ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչների տեսակետը, որով վերջիններս հակադարձում են «Ժողովուրդ»-ի՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մեկուսացմանն ուղղված հարցադրումներին և շեշտադրում յուրաքանչյուր մարդու իրավունքների պաշտպանությունը: Այնուամենայնիվ նախարարության կողմից նման հակադարձումները չեն կարող բավարար համարվել՝ նման հրապարակումների կանխարգելման և հասարակության բացասական վերաբերմունքի դեմ պայքարի հարցում:

Ինչպես նախորդ տարիներին, 2017թ. ևս օգտագործվել է խարանի ու բացասական կարծրատիպերի ձևավորմանը նպաստող բառապաշար՝ «հոգեկան հիվանդ», «շիզոֆրենիկ», «հոգեկան շեղումով», «տառապող»: Այս եզրույթները վախի, անհանգստության, խղճահարության զգացում են առաջացնում: Հավաքագրված 500 հրապարակումներից նման եզրույթներ են պարունակել 61-ը (հրապարակումների մոտ 12 տոկոսը): Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ նման եզրույթների կիրառումը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է (2016թ. հավաքագրված 620 հրապարակումներից 154-ն է՝ մոտ 25 տոկոսը, պարունակել խարանավորող եզրույթներ):

Այսպիսով, կարող ենք նկատել, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումների թիվը տարեցտարի ավելանում է, սակայն բացասական վերաբերմունքը արմատավորող, խարանավորող եզրույթների օգտագործման պարագայում վերջիններս մնում են աննկատ ու քիչ ազդեցիկ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ առկա բացասական վերաբերմունքը մեղմացնելու տեսակետից:

[6] http://armlur.am/714713/, armlur.am/715127/, http://armlur.am/757964/, armlur.am/737335/

Հրապարակված նյութերում մարդու իրավունքների խախտման դեպքերի արտացոլումը

2017թ. զանգվածային լրատվության միջոցներով տարածվել են հրապարակումներ, որոնք անդրադարձել են Հայաստանի Հանրապետությունում անձի իրավունքների հնարավոր խախտումներին: Հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հավաքագրված 500 հրապարակումներից 8-ը մասնավորապես վերաբերել է անձի խոշտանգումներից, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու (4 հրապարակում), առողջության պահպանման (2 հրապարակում) և ազատ կամարտահայտման (2 հրապարակում) իրավունքների խախտումներին:

Հրապարակումներում տեղեկատվություն է տրամադրվում հոգեբուժական հաստատությունում աշխատակցի կողմից բուժում կամ խնամք ստացող անձանց նկատմամբ ֆիզիկական բռնությունների, բանակում ծեծի արդյունքում անձի հոգեկան առողջության խնդիրների ձեռքբերման ու տվյալ գործի դատավարության, քաղաքացիական ակտիվիստին բռնի հոգեբուժական հաստատություն տեղափոխման ու վերջինիս նկատմամբ այնտեղ բռնությունների կիրառման, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող դատապարտյալին պատշաճ բուժօգնության չտրամադրման, առողջական խնդիրների անտեսմամբ անձին բանակ զորակոչման և հոգեբուժական հաստատություններում աշխատակիցների և տեղամասային ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից ընտրողներին ուղղորդումների, ճնշումների վերաբերյալ:

Տարածվել են նաև անձնական տվյալներ պարունակող հրապարակումներ առանց տվյալ անձի թույլտվության մասին համապատասխան նշումի կամ օրինաչափ նպատակի (որոշ հրապարակումներում բացի հոգեկան առողջության խնդիր ունենալու մասին տեղեկությունից նշվում է անգամ հիվանդության ախտորոշումը): Հավաքագրված 500 հրապարակումներից մասնավորապես 58-ը պարունակել են այնպիսի անձնական տվյալներ, որոնց միջոցով հնարավոր է նույնականացնել մարդկանց, ուստի այդ հրապարակումներում խախտվել է անձնական տվյալների պաշտպանության իրավունքը (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող հրապարակումների դասակարգումը

Տարեթիվը	Հավաքագրված հրապարակումների թիվը	Անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող հրապարակումների	
		Թիվը	Տոկոսը
2015	561	29	5.2
2016	620	85	13.7
2017	500	58	11.6
Ընդամենը	**1681**	**172**	10.2

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 5-ից, անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող հրապարակումների թիվը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է, սակայն այն կրկնակի մեծ է 2015 թ. համեմատությամբ։

Անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող 58 հրապարակումներից 25-ը տարածվել են պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերով կամ պետական մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա (11 հրապարակում՝ ՀՀ ոստիկանություն, 6 հրապարակում՝ ՀՀ քննչական կոմիտե, 2 հրապարակում՝ ՀՀ դատախազություն, 2 հրապարակում՝ ՀՀ պաշտպանության նախարարություն, 3 հրապարակում՝ դատական տեղեկատվական համակարգ, 1 հրապարակում՝ տեղական ինքնակառավարման մարմին)։ Մյուս 33 հրապարակումներում տեղեկատվության աղբյուր են հանդիսացել զանգվածային լրատվության միջոցները (18 հրապարակում), փաստաբանները (4 հրապարակում), հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք ու հարազատները (8 հրապարակում), քաղաքացիները (3 հրապարակում)։

2017թ. տարածվել են նաև 17 հրապարակումներ, որոնցում առկա տեղեկատվությամբ չի բացառվում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նույնականացումը։ Այս հրապարակումները տարածվել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (1 հրապարակում), դատական տեղեկատվական համակարգի (1 հրապարակում), զանգվածային լրատվության միջոցի (13 հրապարակում), հոգեբանի (1 հրապարակում), փաստաբանի (1 հրապարակում) կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա։ Ի դեպ, նախորդ տարվա համեմատությամբ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նույնականացման վտանգ ներկայացնող հրապարակումների թիվը նվազել է 10-ով։

Հարկ է նշել, որ մեծ թիվ են կազմում լրագրող Գագիկ Շամշյանի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումները, որոնք խախտում են անձնական տվյալների պաշտպանության իրավունքը կամ այն խախտելու վտանգ ներկայացնում։ Վերջինիս կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա տարածվել է 19 հրապարակում, որոնցից 14-ը փաստացի խախտել է անձի նշված իրավունքը։ Զանգվածային լրատվության միջոցի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող և խախտման վտանգ ներկայացնող 31 հրապարակումների գրեթե կեսում տեղեկատվության աղբյուր է հանդիսացել Գագիկ Շամշյանը։

Այսպիսով, զանգվածային լրատվության միջոցների տարածած տեղեկատվություններով շարունակվում են խախտվել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքները։ Միևնույն ժամանակ մտահոգիչ է մնում զանգվածային լրատվության միջոցներով անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման դեպքերը։

Ամփոփում

Այսպիսով, 2017թ. 16 ինտերնետային էջերի մշտադիտարկման արդյունքում հավաքագրված հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ 500 հրապարակումներից 27-ը տարածվել են պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերով, մյուս 473-ը՝ զանգվածային լրատվության միջոցներով:

Հավաքագրված 500 հրապարակումներում չնայած գերակշռում են տեղեկատվական բնույթի հրապարակումները, սակայն մեծ թիվ են կազմում նաև քրեադատավարական գործողությունների վերաբերյալ հրապարակումները: Միայն 108 հրապարակում վերաբերում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից հանցագործությունների կատարմանը: Այս հրապարակումները, ինչպես նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շրջապատի համար վտանգավոր լինելուն ուղղված հրապարկումները, օգտագործվող տարբեր բացասական երանգներով եզրույթների կիրառումը հանգեցնում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը: Ճիշտ է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց վտանգավոր չլինելուն, նրանց մեկուսացման սխալ մոտեցման մասին ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչների, տարբեր մասնագետների կարծիքը ևս ներկայացված է հրապարակումներում, սակայն դրանք անհամեմատ փոքրաթիվ են:

Զանգվածային լրատվության միջոցներով անձնական տվյալների վերաբերյալ տեղեկություններ հայտնելու արդյունքում շարունակվում է խախտվել անձնական տվյալների պաշտպանության իրավունքը: Ընդ որում այս իրավունքի խախտում է գրանցվել հավաքագրված 500 հրապարակումների ավելի քան տասը տոկոսում:

Ուսումնասիրության միջոցով բացահայտված խնդիրների լուծման նպատակով վերստին առաջարկում ենք՝

ՀՀ պետական մարմիններին՝

1. բացառել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նույնականացնող տվյալներ պարունակող հրապարակումները, երբ բացակայում է դրա օրինաչափ նպատակը,
2. զերծ մնալ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բացասական կարծրատիպեր ձևավորող հրապարակումներից,
3. մեծացնել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավական, առողջապահական և սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ պետության կողմից իրականացվող գործողությունների մասին իրազեկման ծավալները:

Զանգվածային լրատվության միջոցներին հորդորում ենք՝

1. զերծ մնալ անձնական այնպիսի տվյալների հրապարակումից, որով հնարավոր է նույնականացնել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց, երբ բացակայում է դրա օրինաչափ նպատակը,

2. զերծ մնալ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ առկա բացասական կարծրատիպերն ամրապնդող հրապարակումներից, ինչպես նաև նրանց պիտակավորող, կարծրատիպեր առաջացնող տեսքտերի, եզրույթների և բառակապակցությունների կիրառումից։

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի վերաբերյալ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հիմնադրվել է 1998 թվականին որպես ՀՔԱ Հայաստանի կոմիտեի մասնաճյուղ, գրանցվել է 2001 թվականին և վերագրանցվել է 2005 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունում: Կազմակերպության գլխավոր գրասենյակը գտնվում է Լոռու մարզկենտրոն Վանաձորում: Կազմակերպության գործունեության աշխարհագրությունը ընդգրկում է ինչպես Լոռու մարզը, այնպես էլ հանրապետության ողջ տարածքը:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի տեսլականն է՝ մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի առաքելությունն է՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը:

Կազմակերպության գործունեության ոլորտներից է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով 2007 թվականից Կազմակերպության կողմից իրականացվել է մարդու իրավունքների մշտադիտարկումներ ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում[7], պետական բյուջեից հոգեկան առողջության բնագավառի ֆինանսավորման վերաբերյալ ուսումնասիրություն[8]: Նաև շարունակաբար իրականացվում է հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ ՀՀ Կառավարության կողմից հաստատված «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի» և «Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարության» կատարումն ապահովող միջոցառումների իրականացման[9] և զանգվածային լրատվության միջոցներով տարածվող նյութերի մշտադիտարկում[10]:

---

[7] http://hcav.am/wp-content/uploads/2014/09/hogebuj_report.pdf
http://hcav.am/wp-content/uploads/2014/09/main_zekuyc_FINAL.pdf
[8] http://hcav.am/wp-content/uploads/2013/07/zekuyc_book-11.pdf
[9] http://hcav.am/wp-content/uploads/2015/11/տեղեկանք-24-11.pdf
http://hcav.am/wp-content/uploads/2015/05/Տեղեկանք.pdf

2014 թվականին Կազմակերպության կողմից Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով ՄԱԿ-ի կոմիտեին է ներկայացվել նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի այլընտրանքային զեկույց, որն ընդգրկել է մասնավորապես հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հիմնահարցերը[11]:

http://hcav.am/wp-content/uploads/2017/07/Հոգեկան-առողջություն.-ՀՀ-ռազմավարություն.-2014-2016թթ.pdf

[10] http://hcav.am/wp-content/uploads/2016/02/ՁԼՄ-հոգեկան-տեղեկանք.pdf
http://hcav.am/wp-content/uploads/2017/06/ՀԱԽՈՒ_ՁԼՄ-ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ_2016.pdf

[11] http://hcav.am/wp-content/uploads/2015/02/այլընտրանքային-զեկույց.pdf
http://hcav.am/wp-content/uploads/2015/02/Առաջարկ-ՀՈՒԱՒ-կոնվենցիայի-կիրարկման-մասին-Հայաստանի-Հանրապետության-նախնական-զեկույցի-առնչությամբ-հիմնախնդիրների-ցանկի-վերաբերյալ.pdf